թէ Իմերխեւինը։ Իմերխեւի հայ-կաթոլիկ գեղացիները՝ Փխիկուր եւ Դովլաթ խօսում էին վրացերէն. Դովլաթն էլ 1828 թ. կոր-ծանեցին Խամչօղլիները. իսկ Փխիկուրը Շաուշէտի միւս քրիստ. գեղերի հետ կոտո-րուեցան 1918 թ. չնայելով՝ որ Իմերխեւի մուսուլմանները մինչեւ վերջին չունէ տքնեցան նրանց ազատել. բայց իշխիհա-տի դահիճները իրենց վճիռը գործադրեցին։

Արղանուշ, Շաուշէտ եւ Իմերխեւ լեռ-ները ընդհանրապէս ծածկուած են խիտ անտառներով։ Կարճխալ եւ Դեւտոբանի լեռներից իջնում է Պորտա առ-ը, որ ոռո-ղում է Լոդի-վակէ, Իմամ-Ծմինդա, Նա-տալակեվա, Լեկոբանի, Ջանուժիրի (մեծ տաճար լեռան կատարին), Նիոլետի, Զի-կունետի, Զավլիետի, Զիգասխեւի, խոզ-բերուլի, Ցխումրի, Գագա-Սարադուրա (հանքային ջրեր), Էդրինէ, Դիդվինախի, Ախալտա, Պորտա բերդը, Պորտա գեղը, Պորտա եայլան։

Սավացիա լեռ. իջնում է Բերդա առ. բղխելով Ակ-Բունդար Ակից, ոռոգում է բազմաթիւ եայլաներ եւ անցնում է հռչա-կաւոր Բերդա[1] բերդից, որ ունի մեծ տա-

1 Բերդայի բերդի, տաճարի եւ ձորերի մէջ վանքերի հետքեր շատ կան, որոնք ծաղկել են քրիստոնէի վրա-ցախօս եւ վիրական իշխանութեան շրջանում։ Նոյնպէս Պարտայի ձորում կան բազմաթիւ աւերակներ, գերեզ-մանոցներ, տաճարների աւերակ պատեր, որոնք վկայում են, թէ միջնադարում այդ վիճակը ծաղկած էր եւ մեծ բազմութիւն էր ապրում։